ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1926—1929 ԹԹ.)

Գ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերջում թեև երկրի գյուղատնտեսությունը հասել էր զգալի նվաճումների, բայց սոցիալիստական ինդուստրացման իրագործումը նրան առավել մեծ պահանջներ էր ներկայացնում։ Խնդիրն այն է, որ գյուղատնտեսության զարգացման տեմպերը, արդյունաբերության համեմատությամբ, ետ էին մնում, և դրա հիմնական պատճառը գյուղացիական տնտեսությունների փոշիացածությունն էր։ Երկրի բնականոն զարգացումը պահանջում էր խոշորացնել գյուղացիական տընտեսությունները, վերակառուցել և դնել զարգացման սոցիալիստական ուղու վրա։

Երկրի տնտեսական, նաև քաղաքական զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող այս խնդիրը ավարտուն ձևակերպում գտավ կուսակցության XV համագումարի որոշման մեջ, որտեղ ասված էր. «Անհրաժեշտ է, որպես առաջնահերթ խնդիր՝ դնել փոշիացած գյուղացիական տնտեսությունները գյուղացիության հետագա կոոպերացման հիման վրա աստիճանաբար խոշոր արտադրության ռելսերին փոխադրելու խնդիրը...»[1]։

1925 թ. կարելի էր հիմնականում վերականգնված համարել նաև էջմիածնի գավառի գյուղատնտեսությունը։ Հացահատիկի արտադրությունը, օրինակ, գավառում կազմել էր նախապատերազմյան մակարդակի 98,5%-ը, զգալի չափով ավելացել էին ցանքատարածությունները, բարձրացել էր բերքատվությունը։ Ըստ կուլտուրաների ցանքատարածություններն ունեին հետևյալ պատկերը[2].

	Աշնանացան հացաբույս.	Գարնանացան հացաբույս	Բանջարեղեն և բոստան. բույս	Կարտոֆիլ	Բամբակ	Ծխախոտ	Ցուղարքեր մշակ.	Ցանովի հունդ.	Ընդամենը: Դեսյատինով	Ընդամենը: Տոկոսներով
Բացարձակ թվերով (դեսյատիններով)	13700	10616	1051	177	6266	86	72	1035	33003	36000
Տոկոսներով	41,5	32,1	3,2	0,5	19,0	0,3	0,2	3,2	100,0	

Գավառի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր բամբակագործությունը։ Կուսակցական կազմակերպությունները ղեկավարվելով գավառային կուսակցական կազմակերպության VII կոնֆերանսի որոշումներով, զարկ տվին բամբակագործության զարգացմանը։ 1927 թ. բամբակի ցանքատարածությունները, 1925 թ. համեմատությամբ, ավելացան 1178 դեսյատինով, մեկ դեսյատինից միջին հաշվով ստացվեց 70 փութ բամբակի հումք, իսկ առանձին գյու-

1 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 552—553։

2 «Խորհրդային Հայաստանը թվերով» (1923—1927), Երևան, 1928, էջ 64—65։

ղերում, ինչպես օրինակ, Զանգիբասարի շրջանի Գոյգյումբեթ գյուղում մեկ դեսյատինի միջին բերքատվությունն անցավ 70 փթից։ 1927—28 թթ. միայն Վաղարշապատի «Հողագործ» բամբակագործական ընկերությունն ընդունեց 90000 փութ բամբակ, այսինքն՝ նախորդ տարվանից 56%-ով ավելի[3]։

Գավառի գյուղատնտեսության առաջատար բնագավառներից էր այգեգործությունը։ 1925 թ. գավառն ուներ 3173 դեսյատին այգի, 1926 թ. այն ավելացավ 140 դեսյատինով[4]։ 1926 թ. այգիներից ստացվել էր 544000 փութ խաղող՝ 924800 ռ. արժողությամբ։ Այգիներին վնասել էին ցրտահարությունը և հիվանդությունները։ Թույլ էր այգեգործության վարկավորումը։ Գավառում այգեգործության հետագա զարգացմանը մեծ չափով նպաստեց ոռոգման նպատակներով Այղր լճի ջրերի օգտագործումը։ Թեև դանդաղ, բայց աստիճանաբար աճում էր նաև այգեգործական ընկերությունների թիվը. եթե 1926 թ. դրանք 3 էին, ապա 1927 թ. հասան 8-ի[5]։

Գավառի գյուղատնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում նաև անասնաբուծությունը։ Այդ ճյուղի զարգացմանը նպաստելու նպատակով լեռնային գոտում, որը հարուստ էր բուսականությամբ և արոտատեղերով, կառուցվել էր անասնաբուծարան։ Անասնաբուծության զարգացման մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը[6]։

Տարիներ	Բանող անասուն		Կաթն. խոշ. եղջ.		Մանր եղջ.		Ընդամենը	
	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1914	53516	100	41334	100	391780	100	486630	100
1925	13248	24,75	17765	42,98	101530	25,65	132543	27,2
1926	18331	34,2	21633	52,33	128866	35,87	168830	34,7

Անասնաբուծության հետագա զարգացումը անհրաժեշտաբար պահանջում էր ստեղծել կաթնատնտեսական արտելներ, ոչխարաբուծական կոոպերացիա։ Գյուղատնտեսական մթերքների մշակման աշխատանքները կատարվում էին Ապարանի պանրագործարանում։ 1928 թ. գավհողբաժինը կազմեց պանրագործարանին կից կաթնատնտեսական ֆերմա ստեղծելու նախագիծը և նախահաշիվը՝ 12500 ռ.[7]։

Գյուղատնտեսության հետագա վերելքն ապահովելու համար անհրաժեշտ էր գյուղացիության մեջ տարածել գյուղատնտեսական գիտելիքներ, համակողմանի ագրոնոմիական օգնություն ցույց տալ նրան։ Այս գործին մեծապես նպաստեց փորձադաշտերի, կայանների, բուծարանների ստեղծումը։ Հայաստանում փորձնական հիմնարկների ցանցի սկիզբը դրվել է 1925 թվականին՝ Էջմիածնի փորձադաշտի բացումով։ Այն ուներ 40 դեսյատին հողամաս՝ հատկացված նախկին վանքապատկան հողերից։ Փորձադաշտի ծրագրի մեջ մտնում

3 «Խորհրդային Հայաստան», 15. II. 1928։

4 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության Պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ), ֆ. 134, ց. 1, գ. 101, թ. 4։

5 ՍՄԿԿ ԿԿ-ին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև Մլի հայկական մասնաճյուղի արխիվ), ֆ. 6, ց. 1, գ. 247, թ. 13։

6 ՀՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 101, թ. 4։ (Աղյուսակի վերջին սյունակի թվերը ճշտված են մեր կողմից — Գ. Մ.)։

7 «Խորհրդային Հայաստան», 8. II. 1928։

էին հողի մշակության տեխնիկայի և պարարտացման հարցերի ուսումնասիրությունը, բամբակի ու աշնանացան ցորենի ամենալավագույն հերթականությունն այլ կուլտուրաների հետ որոշելը՝ սերմնաշրջանառություն մշակելու նպատակով, ցանքի խնամքի, ոռոգման, բամբակի և այլ բույսերի փորձարկությունը և այլն[8]։

1926 թ. Էջմիածնի գավառն ուներ 6 գյուղատնտես և 2 հրահանգիչ։ 1926—1927 թթ. ստեղծվեցին գիտա-փորձնական հիմնարկներ, փորձադաշտեր, գյուղատնտեսական թանգարան, շերամապահական կայան, տեղական ու շվեյցարական կովերի բուծարան և այլն[9]։

Վերականգնման շրջանում շարունակվում էին արդեն սկսված հողաշինարարական աշխատանքները։ Հողաբաժանության խնդիրն էր՝ հողով բավարարել հողազուրկ և սակավահող գյուղացիներին, վերջ տալ հողի կուտակմանը կուլակների ձեռքում։ 1927 թ. գավառում, չնչին բացառությամբ, ավարտված էր հողաբաժանությունը։ Դրանից հետո սկսվեց հիմնական հողաշինարարությունը, որի խնդիրն էր՝ ստեղծել հողօգտագործման այնպիսի պայմաններ, որոնք մի կողմից՝ առավելագույն չափով նպաստեին գյուղատնտեսության ինտենսիվիկացմանը, իսկ մյուս կողմից՝ հողօգտագործման կոլեկտիվ ձևերի զարգացմանը[10]։

Հիմնական հողաշինարարությունը պետք է վերացներ հողացրվածությունն ու հողհեռավորությունը, վեճերն ու տարաձայնությունները գյուղացիների միջև։ Հիմնական ներքին հողաշինարարության մեջ էր մտնում նաև ոռոգման և հաղորդակցման ցանցի կարգավորումը։

Երկու տարվա ընթացքում Էջմիածնի գավառում հողաշինարարվեց 19 գյուղ՝ 16.000 հեկտար հողատարածությամբ[11]։ Հիմնական ներքին հողաշինարարությունն ըստ ծրագրի գավառում պետք է ավարտվեր 1931 թ.։ 1928 թ. վերջերին գավառում հողաշինարարված էր արդեն 36 գյուղ՝ 24000 հեկտար հողատարածությամբ և սկսվել էին գյուղերի հատակագծման աշխատանքները։ «Հին գյուղն իր ավերակներով և քսենեֆոնյան շինարարություններով պետք է փոխարինվի նոր սովետական գյուղով»[12],— ասված էր Էջմիածնի գավառի գյուղերի հատակագծման վերաբերյալ թղթակցության մեջ։ 1928 թ. հատակագծված էին 36 գյուղ՝ 3500 տնամերձ հողամասերով։ Այդ գյուղերում բնակարանային շինարարությունն ընթանում էր արագ տեմպերով[13]։

Վաղարշապատի ներքին հիմնական հողաշինարարությունն ավարտվեց 1926 թ. վերջերին։ Բուն Վաղարշապատի շուրջը եղած հողերն ամբողջապես հատկացվեցին բնիկներին, իսկ վերաբնակիչների համար հիմնվեց Նոր-Շենը, որի հողերը ոռոգվում էին Այղր լճից հանված նոր առվով։ Դրա շնորհիվ Վաղարշապատի դաշտի հողհեռավորությունը 7—8 վերստից կրճատվեց 2—3 վերստի[14]։ Քաղաքի հատակագծման համար առանձնացվեց 200 դեսյատին հող։

---

8 «Գյուղատնտեսական կյանք», 1926, № 7, էջ 14։
9 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 101, թ. 15։
10 «Գյուղատնտեսական կյանք», 1927, № 10—11, էջ 6։
11 Նույն տեղում, էջ 78։
12 «Экономический вестник Армении», 1928. № 8—10, էջ 23։
13 Նույն տեղում։
14 «Գյուղատնտեսական կյանք», 1926, № 10, էջ 61։

Այն հատակագծվեց ակադեմիկոս Թամանյանի նախագծով։ Վանքի նախկին հողամասի վրա նոր գյուղակ հատակագծվեց գաղթականների և տնազուրկ բնիկների համար։ Վաղարշապատի ներքին հողաշինարարության ավարտման շնորհիվ հողացրվածությունը իսպառ վերացվեց։ «Տնտեսությունների ճնշող մասը հող ստացել է մի կտորով։ Այսպիսով կոլեկտիվ հողօգտագործման առաջին նախադրյալն արդեն ստեղծված է»[15],— ասված էր «Գյուղատնտեսական կյանք» ամսագրում։

1926 թ. ավարտվեցին նաև Սարդարապատի ներքին հիմնական հողաշինարարության աշխատանքները։ Սարդարապատը միջգյուղյա հողաշինարարությամբ վերածվեց 4 մասի՝ Սարդարապատ, Նորապատ, Հացիկ և Նորեկ։ Հացիկում և Նորեկում տեղավորեցին գաղթականներին։ Գյուղացիների համաձայնությամբ ծխերի հողաբաժինները հատկացվեցին մեկ տեղում։ Այսպիսով, նախկին Սարդարապատի դաշտի 500—600 ցրված, անկանոն ու տձև հողակտորների փոխարեն հողաշինարարությունն ստեղծում էր քառանկյունաձև մոտ 800 կանոնավոր հողամասեր։ Անդրադառնալով դրան, «Գյուղատնտեսական կյանք» ամսագիրը շեշտում էր. «Հողացրվածության վերացման ասպարեզում սա առաջին ու մեծ հաղթանակն է Խորհրդային Հայաստանում»[16]։ Բնիկների հետ միասին հող ստացան նաև գաղթականները. 1927 թ. Էջմիածնի գավառում հողով բավարարված էին 20.000 գաղթականներ, բայց 7000 հոգի դեռ հողազուրկ էին[17]։

Էջմիածնի գավգործկոմի հողագործական բաժնի 1928 թ. հողաշինարաբական աշխատանքի ծրագրով նախատեսվում էր ավարտել հողաշինարարությունը Սամաղարի շրջանի Հաջիզարա, Նոր Արմավիր, Փոքր Շահրիար, Մեծ Շահրիար և այլ գյուղերում, միաժամանակ պայմաններ ստեղծել չքավոր տնտեսությունները կոլեկտիվ տնտեսության մեջ ներգրավելու համար[18]։

1928 թ. հունվարի տվյալներով բաշխված էր 77987 հեկտար հող։ Գավառում հողով բավարարված և չբավարարված տնտեսությունների թվի մասին կարելի է դատել հետևյալ աղյուսակից[19].

Գաղաք և գավառամասեր	Տնտեսությունների թիվը	Բնակչության թիվը	Հողով բավարարվածներ		Հողով չբավարարվածներ		Անձնական հողամասի չափը մ.	Ծանոթություն
			տնտ.	անձ	տնտ.	անձ		
Վաղարշապատ	2284	8149	127	4100	1010	4049	0,51	Հողազուրկների թվի մեջ չեն մտնում քրդերը։ Հողազուրկների թվի մեջ են մտ. Հուն. նոր եկած գաղթ.
Սամաղար	4529	18956	4430	18461	99	495	0,56	
Աշտարակ	6067	29570	5387	28820	180	750	0,85	
Ղուրղուղուլի	6293	23829	6013	22149	280	1680	0,75	
Ջանգիբասար	3349	13068	3247	12568	102	500	0,39	
Ապարան	4566	25558	4511	25378	55	180	0,61	
Ընդամենը	27088	119130	25362	111476	1726	7654		

15 Նույն տեղում, 1926, № 11, էջ 68։

16 Նույն տեղում, 1926, № 8, էջ 46։

17 Նույն տեղում, 1927, № 11—12, էջ 72։

18 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 133, թ. 773։

19 Նույն տեղում, գ. 101, թ. 14։

Հողաշինարարական աշխատանքների բաղկացուցիչ մասն էր հանդիսանում արոտաշինարարությունը։ Կատարվել էր Արադածի ամառային արոտների արտանկաբում, որոշվել էին մի քանի վիճելի արոտավայրերի սահմանները։ Արոտների բաշխումը 1926 թ. կատարվեց խաշնարածների ներկայացուցիչների ընդհանուր ժողովում։ Սակայն, արոտների բաշխման հարցում թույլ տրվեցին որոշ սխալներ։ Այսպես, մի շարք գյուղեր 1928 թ. ստացան անբավարար տարածությամբ ամառային արոտներ։

Հիմնական ներքին հողաշինարարությունը խնդիր ուներ նաև կարգավորելու ոռոգման ցանցը։ Հին ջրանցքների վերանորոգման հետ հայջրտնտեսության վարչությունը ձեռնարկեց նոր ջրանցքների կառուցումը։ 1925 թ. սկսվեց Սարդարապատի փոքր ջրանցքի շինարարությունը։ Այդ նույն ժամանակ սկսվեցին նաև Այղր լճի ափին ջրհան մեքենա դնելու աշխատանքները. այն պետք է ջուր վերցներ Սև ջրից, իսկ էլեկտրաէներգիա՝ Երևանի նորակառույց հիդրոէլեկտրակայանից[20]։ Այղր լճի ջրհան կայանը իր հզորությամբ առաջինն էր Սովետական Միության մեջ, այդպիսի կայանի կառուցման փորձ մինչ այդ չկար։ Կայանը գործարկվեց 1927 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 7-րդ տարեդարձի օրը[21]։ Կայանի կառուցման վրա ծախսվել է 2,4 միլիոն ռ.։ Այն հնարավորություն տվեց Էջմիածնի գավառում ոռոգելու 6200 հեկտար հողեր[22]։

Գավառի գյուղատնտեսության հետագա զարգացման և նրա սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստելու գործում կարևոր դեր էր կատարում կոոպերացիան։ 1926 թ. ընդլայնվեց սպառողական ընկերությունների ցանցը գավառում։ Սպառողական կոոպերացիան, բացի ապրանքամատակարարումից, կազմակերպում էր նաև դրանց արտադրությունը։

1926 թ. գավառում գործում էին 12 սպառողական ընկերություններ՝ Վաղարշապատում, Աշտարակում, Սամաղարում, Ալիքուշակում, Ներքին Խաթունարխում, Գոյգյումբեթում, Օշականում, Մարգարայում, Մեծ Շահրիարում, Արմավիրում, Թալինում, Ղարաղշլաղում[23]։

Սպառողական կոոպերացիայի հետագա աճը երևում է հետևյալ աղյուսակից[24].

Գավառ	1/10 1926 թ.		1/10 1927 թ.		1/10 1928 թ.	
	Ընկերությունների թիվը	%	Ընկերությունների թիվը	%	Ընկերությունների թիվը	%
Էջմիածին	12	100	13	108,3	15	125,0

20 «Գյուղատնտեսական կյանք», 1926, № 1, էջ 22։

21 «Экономический вестник Армении», 1928, № 6—7, стр. 66.

22 «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30)», Երևան, 1931, էջ 52։

23 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 128, թ. 475։

24 «ՀՍԽՀ սպառկոոպերացիան թվերով», Երևան, 1929, էջ 29։

1926—27 թթ. գավառում առևտրի 58%-ը կատարվում էր սպառկոոպերացիայի միջոցով, 41%-ը՝ մասնավորների և 1%-ը՝ պետառևտրի[25]։

Սպառկոոպերացիան համաչափ կերպով իր ցանցը տարածել էր ամբողջ գավառում, սակայն դեռևս չէր կարողանում բավարարել բնակչության պահանջները, մասնավորապես սպիտակեղենի և գործվածքների սուր կարիք էր զգացվում։

Գավառում գործում էին 6 վարկային ընկերություն, որոնք միավորում էին 4359 անդամներ (գավառի տնտեսությունների 16,1%-ը)։ Անդամների սոցիալական կազմն այսպիսին էր՝ ունևորներ՝ 6,1, միջակ գյուղացիներ՝ 36,1 և չքավորներ՝ 57,8%-ը։

Գավառում զարգանում էր նաև գյուղատնտեսական արտադրական կոոպերացիան։ 1927 թ. հունվարի 1-ի տվյալներով այնտեղ գործում էին գյուղատնտեսական կոոպերացիայի հետևյալ տեսակները[26].

Գավառ	Գյուղ. ընկեր.		Խառն գյուղ. ընկեր.		Այգեգործական ընկեր.		Բամբ. ընկեր.		Մեղվ. ընկեր.		Մախաղ. ընկեր.		Մեք. ընկեր.		Ընդամենը		% կոոպ.
	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	Միավ.	անտ.	
Էջմիածին	6	3383	1	12	4	789	11	948	2	70	1	25	10	263	35	5490	20,4%

Բամբակագործական ընկերությունները հիմնականում կատարում էին վարկավորման ֆունկցիա, իսկ բամբակն ընդունում էր Սարդարապատի № 3 բամբակագործարանը։ Գավառի տնտեսության մեջ կարևոր դեր էին կատարում այգեգործական ընկերությունները, որոնք գործում էին Վաղարշապատում, Քյորփալու, Օշական, Ղզլթամուր, Փարաքար, Աշտարակ, Աղավնատուն գյուղերում։ Այգեգործական կոոպերացիայի գլխավոր ֆունկցիաներից մեկը, բացի վարկավորումից, մթերքների վաճառահանման գործն էր։ 1927 թ. խաղողի և գինու մթերումներն ու վաճառահանումը կատարվեցին նախորդ տարվա համեմատությամբ շատ ավելի հաջող։ Օշականի այգեգործական ընկերությունը 1926 թ. տվեց 4000 դույլ գինի, իսկ 1927 թ.՝ 25240 դույլ[27]։

Մեքենայական ընկերությունները կազմակերպում էին գյուղատնտեսության մեջ մեքենաների օգտագործման աշխատանքը։ 1926—27 թթ. գավառում գործում էին 8 մեքենայական ընկերություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ մեկ տրակտոր, 2 սերմացուցիչ, 7 շարքացան, 5 սրսկիչ, 11 փոցխ։ Մեքենայական ընկերությունների աշխատանքի փորձը ցույց էր տալիս, որ գյուղացիությունը գիտակցում էր դրանց կարիքը, քանի որ գավառում չնչին էր բանող անասունների քանակը։

Գյուղատնտեսական կոոպերացիան գավառում հետագա տարիներին բավականին աճեց. եթե 1926 թ. գավառում կոոպերացվել էր բոլոր տնտեսությունների 13,5%-ը, ապա 1928 թ. կոոպերացման տոկոսը հասավ 51,4-ի[28]։

Ըստ կոոպերացման աճի տեմպերի էջմիածնի գավառը գրավում էր 2-րդ աեղը, Մեղրուց հետո։ Էջմիածնում-գյուղկոոպերացիայի զարգացման համար

25 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 128, թ. 526։

26 «Գյուղատնտեսական կյանք», 1927, № 5, էջ 71։

27 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 128, թ. 524։

28 «Հայգյուղկոոպի գործունեության հաշվետվությունը», Երևան, 1928, էջ 20։

նպաստավոր գործոն էր գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնացման բարձր աստիճանը[29]։

Գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիան, տնտեսության զարգացման կարևոր գործոն հանդիսանալուց բացի, ուներ նաև դաստիարակչական մեծ նշանակություն։ Այն գյուղացիներին դաստիարակում էր կոլեկտիվիզմի ոգով, համոզում նրանց կոոպերացիայի առավելությունների և տնտեսությունների միավորման անհրաժեշտության մեջ։ Հսկայական էր նաև գավառում ստեղծված № 3 սովետական տնտեսության և առաջին կոմունաների աշխատանքի դրական օրինակը։ Գավառում կազմակերպված № 3 սովետական տնտեսությունը տարեցտարի տնտեսապես ամրանում էր, ընդարձակվում էին խաղողի և այլ կուլտուրաների տարածությունները, բարձրացնում բերքատվությունը։ Արդեն 1926 թ. այդ տնտեսության դաշտավարական աշխատանքները զգալի չափով մեքենայացված էին։ Ուշագրավ է այն երևույթը, որ սովետական տնտեսությունը իր աշխատանքները վերջացնելուց հետո մեքենաները տրամադրում էր հարևան գյուղերին։ Տնտեսությունն ուներ 3 տրակտոր, որոնք բացի սովետական տնտեսության հողերից, հերկում էին նաև շրջանի գյուղացիության հողերը։ Ձեռք էր բերված կալսող մեքենա, որը տնտեսության բերքը կալսելուց հետո կալսում էր նաև շրջակա գյուղերի գյուղացիների հացահատիկը[30]։

Բացի № 3 սովետական տնտեսությունից գավառում գործում էին Լուկաշենի և Թաքիայի կոմունաները։ Սակայն նրանցում ցածր էր աշխատանքի արտադրողականությունը, «Հայգյուղկոոպը» անհրաժեշտ չափով չէր վարկավորում կոմունաներին[31]։

Սոցիալիստական վերակառուցման այդ հաջողությունները նախկին շահագործող դասակարգերը հաշտ ու խաղաղ չէին ընդունում. գյուղում սրվում էր դասակարգային պայքարը։ Վ. Ի. Լենինը զգուշացնում էր, որ պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակից հետո դասակարգային պայքարը չի անհետանում, այլ «միայն փոխում է իր ձևերը. շատ տեսակետից էլ ավելի կատաղի դառնալով»[32]։ Այդ պայքարի ընթացքը կախված էր նաև նրանից, թե ո՞ւմ կողմը կլինի միջակը։ Անհրաժեշտ էր կազմակերպել չքավորությանն ու բատրակությանը, ամրապնդելով նրանց դաշինքը միջակի հետ։

Այս խնդրին մեծ նշանակություն էր տվել կուսակցության XIV համագումարը։ Համագումարի որոշման մեջ ընդգծվում է գյուղական չքավորությանը կազմակերպելու անհրաժեշտությունը, որը պետք է «կանգնի կուլակին կազմակերպված դասակարգային հակահարված տալու ուղու վրա և դառնա պրոլետարական քաղաքականության հուսալի հենարանը պրոլետարիատի շուրջը միջակներին համախմբելու համար նրա մղած պայքարում»[33]։

Չքավորների կազմակերպման աշխատանքը գավառում սկսվեց 1926 թ.։ 1927 թ. գավառում կային 44 չքավորական խմբեր։ Սովետների ընտրությունների ժամանակ կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ

29 Նույն տեղում, էջ 17։

30 «ՀՍԽՀ կառավարության հաշվեավության նյութեր» (մարտ 1925 — հունվար 1927), Երևան, 1927, էջ 17։

31 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 134, ց. 1, գ. 123, թ. 516։

32 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 477։

33 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 251—252։

բոլոր գյուղերում անցկացվեցին խորհրդակցություններ։ Բայց առանձին գյուղերի (Քյորփալու, Ջաֆարաբատ և այլն) կուսակցական բջիջներում սովետների ընտրության ժամանակ թույլ էին տրվել լուրջ սխալներ, փորձեր էին կատարել սովետների կազմում առաջադրելու միայն չքավոր գյուղացիներին։ Նման սխալները կարող էին խիստ բացասաբար անդրադառնալ չքավորության և միջակի դաշինքի ամրապնդման վրա։ Գավառային կոմիտեն ժամանակին ուղղեց այդ սխալները։ Սխալներ թույլ տրվեցին նաև հարկային քաղաքականության կենսագործման ընթացքում։ Օրինակ, պրոգրեսիվ հարկադրման տակ էին գցում միջակներին (Ղուրդուղուլի, Գեչալու գյուղերում)։ Կուսակցության գավկոմի ստուգումները պարզեցին, որ անհատական հարկավորման ենթարկված 14 տնտեսություններից 10-ը միջակներ են և մեկը՝ չքավոր։ Սամազարի շրջանում անհատական հարկադրման էին ենթարկել երկու միջակի։ Նման երևույթներ տեղի էին ունեցել նաև Ապարանի շրջանում[34]։ Այս և այլ կարգի խնդիրները խիստ բացասաբար էին անդրադառնում գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների վրա։

Վ. Ի. Լենինը բազմիցս զգուշացրել է, որ դասակարգային պայքարի ընթացքում չպետք է միջակին խառնել կուլակի հետ։ «Խառնել միջակ գյուղացիներին կուլակների հետ,— ասում էր Վ. Ի. Լենինը,— տարածել նրանց վրա այս կամ այն չափով այն ձեռնարկումները, որոնք ուղղված են կուլակության դեմ, նշանակում է ամենակոպիտ կերպով խախտել ոչ միայն սովետական իշխանության բոլոր դեկրետները և նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր սկզբունքները...»[35]։

Դասակարգային սուր պայքարի պայմաններում փոխանակ ուժեղացնելու չքավորական խմբերի աշխատանքը, առանձին գյուղերում թուլացնում էին այն, չքավորական ֆոնդերը լրիվ չէին օգտագործվում։ Այսպես, 1927 թ. Աշտարակի և Ղուրդուղուլու ՓՕԿ-երը 22114 ռ. ֆոնդից չքավոր տնտեսություններին բաց են թողել ընդամենը 1640 ռ., որը կազմում է ֆոնդի 8%-ը։ Բայց յուրաքանչյուր տնտեսությանը հատկացված գումարը այնքան չնչին է եղել (5—8 ռ.), որ հազիվ թե հնարավոր լիներ օգտագործել արտադրական նպատակներով[36]։

Գավառում ամբողջությամբ վերցրած չքավորների շրջանում տարվում էր աշխատանք, պարբերաբար հրավիրվում էին չքավորների ընդհանուր ժողովներ և խորհրդակցություններ, չքավորներին տրվում էր վարկ՝ նրանց կուլակի տընտեսական կախումից ազատելու համար։ Չքավորներն ազատվում էին հարկից։ 1927 թ. էջմիածնի գավառում հարկից ազատվել էր չքավորական տնտեսությունների 41%-ը[37]։

Այսպիսով, չքավորների կազմակերպումը, գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի լայն ցանցը գավառում, խորհրդային տնտեսության առավելությունները ռեալ հիմք ստեղծեցին գավառում գյուղատնտեսության կոլեկտիվացման աշխատանքները ծավալելու համար։

Ղեկավարվելով կուսակցության XV համագումարի որոշումներով, կուսակցության էջմիածնի գավառային կոմիտեն լայն գործունեություն ծավալեց գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղղությամբ։ Հոկտեմբերյան հեղափոխու-

34 ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 6, ց. 1, գ. 54, թ. 11։

35 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 29, էջ 257։

36 «Կոմունիստ», 1928, № 2, էջ 46։

37 Նույն տեղում, էջ 47։

թյունից հետո մանր-փոշիացած ապրանքային տնտեսությունները սոցիալիստական ուղու վրա փոխադրելը կոմունիստական կուսակցության առջև դրված ամենադժվարին ու բարդ խնդիրներից էր։ Հարկավոր էր խստորեն կենսագործել կուսակցության ցուցումները գյուղացիության տարբեր շերտերի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին, հատուկ ուշադրություն նվիրել միջակ գյուղացիությանը, ամրապնդել բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության դաշինքը միջակի հետ։ Բանն այն է, որ միջակը լինելով աշխատավոր տարր, կապված էր սովետական իշխանության հետ, բայց նա սեփականատեր էր և ձգտում էր միշտ ամրապնդել մասնավոր սեփականության վրա հիմնված իր տնտեսությունը, հարստանալ. այդ առումով էլ հակում ուներ դեպի կուլակը։ 1926—1929 թթ. ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում ու Էջմիածնի գավառում գյուղական բնակչության գերակշռող մասը կազմում էր միջակը։ Անհրաժեշտ էր առաջին հերթին ամրապնդել դաշինքը միջակի հետ։ Կուլակությունը լայն պայքար էր ծավալում միջակ գյուղացիությանը իր կողմը նվաճելու համար։ Կոմունիստական կուսակցության առջև կարևոր խնդիր էր դրված միջակին կտրել կուլակի ազդեցությունից, ամրապնդել նրա կապը բանվորների և չքավոր գյուղացիների հետ։

Գավառում կոլեկտիվ տնտեսություններ ստեղծելու հարցին մեծ տեղ տվեց գավառային կուսակցական կազմակերպության IX կոնֆերանսը։ Գավկոմի քարտուղար Կ. Համդիլյանն իր հաշվետու զեկուցման մեջ նշեց, որ դյուզում տարվելիք մեր հիմնական աշխատանքներից մեկը կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն է[38]։ Էջմիածնի գավառում առաջին կոլտնտեսությունները ստեղծվեցին 1928 թ. սկզբներից։ Արդեն մայիսի վերջերին գավառն ուներ 13 կոլտնտեսություն[39]։ Գավառի ամենամեծ կոլտնտեսությունը Վաղարշապատի «Անաստվածն» էր, որը ստեղծվել է 1928 թ. գարնանը։ Կոլտնտեսությունն առաջին շրջանում ուներ 51 դեսյատին վարելահող և այգի։ Այդ ընդհանուր տարածությունից 21 դեսյատինը վարելահող էր, 8,5 դեսյատինը՝ նոր գցված այգիներ, 8 դեսյատինը՝ բերքատու, բայց հին և վատ մշակված այգիներ։ 13 դեսյատին անմշակ տարածություն նոր միայն սկսեցին մշակելի դարձնել։ Կոլտնտեսականները 74 հեկտարի վրա տնկեցին Ղրիմից բերված տարբեր տեսակի պտղատու ծառեր, Հրազդան գետի վրա կառուցեցին երկու կամուրջ։ Լավ աշխատանքի համար կոլտնտեսությունը «Հայգյուղկոոպից» նվեր ստացավ մեկ նոր տրակտոր։

Շինարարական աշխատանքների համար կոլտնտեսությունը պետք է ստանար 4000 ռ. վարկ, որը դեռևս չէր ստացել։ «Հայրամբակկոմը» բաց էր թողել 6430 ռ. վարկ, որից՝ երկարատև՝ 5400, կարճատև՝ 1030 ռ.։ Այդ վարկերը նպատակային էին, որոնցից 1700 ռ. հատկացված էր նոր այգիներ տնկելուն, 630 ռ.՝ եղած այգիների մշակությանը, 400 ռ.՝ բուժանյութերի, 1800 ռ.՝ գյուղատնտեսական գործիքների, 1900 ռ.՝ մելիորացիայի և այլ նպատակների համար։ Մինչև 1928 թ. մայիսի 28-ը այդ վարկերից ծախսված էր 5130 ռ.։ ՀԿ(բ)Կ Էջմիածնի գավառային կոմիտե ուղարկված մի զեկուցագրում, կոլտնտեսության մասին ասված էր. «Կոմունիստները և ԼԿԵՄ անդամները օրինա-

---

38 Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 6, ց. 1, գ. 504, թ. 13։

39 Նույն տեղում, գ. 581, թ. 1։

կելի են իրենց աշխատասիրությամբ և համերաշխությամբ։ Անկուսակցական անդամները գիտակցությամբ են վերաբերվում դեպի կոլեկտիվը»[40]։

1928 թ. մայիսին գավառում կար 13 կոլտնտեսություն (որոնց մեջ մտնում էին հողօգտագործող ընկերությունները և կոմունաները)։ Մինչև տարվա վերջը նրանց թիվը հասավ 17-ի։ Մեկ տարվա ընթացքում Հայաստանի կոլտնտեսությունների թիվը 8-ից հասավ 96-ի։ Այդ տնտեսությունների 48,9%-ը ընկնում էր Երևանի և Էջմիածնի գավառներին, այսինքն՝ գլխավորապես զարգացած ապրանքային շրջաններին[41]։ Հետագա ամիսներին շարունակվում էր նոր կոլտնտեսությունների կազմակերպումը։

1929 թ. սկզբներին կազմակերպվեց Ղուրդուղուլու գյուղատնտեսական արտելը, որը աշխատավորներն անվանեցին «Նոր կյանք», հետագայում տընտեսությունը կոչվեց Ա. Ժգանովի անունով։ «Նոր կյանք» կոլտնտեսության հիմնադիրներն էին Անուշավան Պողոսյանը, Նահապետ Ավագյանը, Հովհաննես Հարությունյանը, Գրիգոր և Սարիբեկ Ենգիբարյանները, Աբակում Կնյազյանը, Աբել Մարտիրոսյանը և ուրիշներ[42]։

1929 թ. փետրվարի 25-ի տվյալներով գավառում կոլտնտեսային շինարարությունը ուներ հետևյալ պատկերը[43].

Գավառ	Հողի համայն. մշակում			Գյուղատնտեսական արտել			Կոմունա			Ընդամենը		
	Ան. 1/10 1928	Ան. 1/1 1929	Ան. 25/2 1929	Ան. 1/10 1928	Ան. 1/1 1929	Ան. 25/2 1929	Ան. 1/10 1928	Ան. 1/1 1929	Ան. 25/2 1929	Ան. 1/10 1928	Ան. 1/1 1929	Ան. 25/2 1929
Էջմիածին	1	3	18	12	12	12	2	2	2	15	17	32

Տեսնելով կոլտնտեսային շինարարության այս հաջողությունները, դասակարգային թշնամին ամեն կերպ ձգտում էր ձախողել կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման աշխատանքները։ Նրա պայքարի մեթոդները բազմազան էին՝ սկսած բացահայտ տեռորից, ընդհուպ մինչև Սովետական Միության «շահերի պաշտպան» ձևանալը։ Սամաղարի շրջանի Ալիբեկլու գյուղի կուլակներից մեկը, օրինակ, կոմերիտական բատրակ Խաչիկ Պողոսյանին խեղդում և գցում է եկեղեցու բակի ջրհորը[44]։ Կուլակները տեռոր էին կազմակերպել նաև Խթունարխի և Սարդարապատի կոլտնտեսությունների նախագահների դեմ։ Սարդարապատում օպոզիցիոներները կազմակերպում են «Նոր գվարդիա» անունով մի բանդա, որի անդամներից մեկը հերյուրանքներ էր տարածում կոլտնտեսության մասին, ներկայացնելով այն որպես կոմունա, որտեղ «մարդիկ ապրում են մերկ, անասունների նման»։ Վերին Այլանլու գյուղի կուլակները ճգնում էին համոզել չքավորների կանանց, որ իբր քաղաքից 100 մետրանոց տեղաշոր պետք է բերեն, որ կոլեկտիվացողները մի անկողնում քնեն[45]։

40 Նույն տեղում, թ. 3։

41 «Экономический вестник Армении», 1929, № 1, стр. 43.

42 Գ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ա. Կնյազյան, Արմավիր, Երևան, 1971, էջ 20։

43 «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր» (1926—27 և 1927—28 թթ.), Երևան, 1929, էջ 134։

44 Ե. Հովհաննիսյան, Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, Երևան, 1969, էջ 69։

45 «Խորհրդային Հայաստան», 23. I. 1930։

Կուլակները ջանք չէին խնայում ձախողելու ինդուստրացման և գյուղատնտեսության ամրապնդման փոխառությունները։ Դայթար գյուղում կուլակներն ասում էին. «Եթե սովետական իշխանությունը փող չունի, թող ինդուստրացում չանցկացնի, թող իր վերմակի չափ մեկնի ոտները»[46]։ Մյուս գյուղերում կուլակները փորձում էին թավանցել սովետական օրգանները, մասնակցել ժողովներին. «Մենք էլ փոխառությանը կմասնակցենք,— ասում էին նրանք,— միայն թե թույլ տաք ձեր ժողովներին մասնակցել և մեզ հետ իշխանությունը վարվի այնպես, ինչպես միջակի հետ է վարվում»[47]։ Կուլակները դիմում էին նաև բացահայտ վնասարարության՝ հրդեհում կոլտնտեսության ունեցվածքը։ Մարդարա գյուղում նրանք հրդեհեցին կոլտնտեսության խոտը[48]։

Կոլտնտեսային շինարարության ընթացքում գավառում թույլ տրվեցին որոշ սխալներ։ Մի շարք տեղերում առանձին կոմունիստներ ոչ միայն չէին օգնում կոլտնտեսությունների ամրապնդմանը, այլ, ընդհակառակը, իրենք էին դուրս գալիս կոլտնտեսությունից (Ղուզիգեղան, Ղուրդուղուլի)[49]։ Հայկական Զեյվա գյուղում կոլտնտեսության վարչության անդամ Հրաչ Սիմոնյանը պաշտպանում էր իր ազգական Հայրապետ Սիմոնյանին, որը գործում էր կուլակների հետ միասին։ Ինքը՝ Հրաչը, աջ թեքման կողմնակից էր, յուրացրել էր կոոպերատիվի գումարները և զտումից հետո մնալով կուսակցության մեջ, ընտրվել էր կոլտնտեսության վարչության անդամ[50]։

Կոլեկտիվացման տարիներին ոչ բոլոր կոմունիստներն էին ցուցաբերում դասակարգային մոտեցում։ Մոլլաբայազետ գյուղում կուլակներից մեկին անհրաժեշտ էր անհատական հարկադրման ենթարկել։ Գյուղսովետի նախագահը հրաժարվեց պաշտոնից, հայտարարելով. «Խնդրում եմ այդ պարտականությունը վերցնել իմ վրայից, որովհետև ես չեմ ուզում հարևանիս հետ վատամարդ լինել»[51]։ Համբեկլու գյուղի գյուղսովետի նախագահ, կոմունիստ Սարգիս Ղազարյանը կուլակներին կուլակաթափ անելու ժամանակ գյուղից փախել էր[52]։

Կոլտնտեսային շինարարության տարիներին գավառի կազմակերպությունների թույլ տված սխալները վտանգավոր էին մասնավորապես նրանով, որ կուլակները չէին հապաղում օգտվել դրանցից իրենց սև գործը կատարելու համար։ Եղել են, օրինակ, միջակների նկատմամբ անհատական հարկադրում կիրառելու, նրանց երեխաներին դպրոց չընդունելու դեպքեր։ Ուղղելով թույլ տված սխալները, գավառի կուսակցական և մյուս կազմակերպությունները լայն գործունեություն ծավալեցին կոլտնտեսություններն ամրապնդելու, նոր կոլտնտեսություններ ստեղծելու ուղղությամբ։

---

46 Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 6, ց. 1, գ. 505, թ. 3։
47 Նույն տեղում։
48 «Մաճկալ», 3. II. 1930։
49 Մլի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 6, ց. 1, գ. 505, թ. 23։
50 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 237, թ. 30։
51 Նույն տեղում, ֆ. 6, ց. 1, գ. 54, թ. 22։
52 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 231, թ. 30։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ ПЕРЕУСТРОЙСТВО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В ЭЧМИАДЗИНСКОМ УЕЗДЕ (1926—1929 гг.)

Г. А. МУРАДЯН

Резюме

В 1925 г. сельское хозяйство Эчмиадзинского уезда почти полностью достигло довоенного уровня, что дало возможность приступить к его социалистическому переустройству. Под руководством уездной партийной организации в эти годы был осуществлен целый ряд мероприятий по землеустройству, расширению оросительной системы, развитию кооперации, а также коллективизации сельского хозяйства. При претворении в жизнь поставленных партией задач партийным организациям приходилось вести решительную борьбу против оппозиционеров и классовых врагов, стремившихся всячески препятствовать социалистическому преобразованию деревни.